

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՌՈՎԵԱՆ - ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՅ - ԳԷՈՐԳ ԴՈԴՈՒՆԵԱՆՅ

ԴՈՐՊԱՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ԴԻԻԱՆԱԿԱՆ ՎԿԱՑԱԹՈՒՂԹԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆ

Դկտ. Արտաշէս Արեղեանի «Դորպատի հայ Ուսանողութիւնը» գրքոյիկն աւելորդ. (տպ. Մխիթ. Տպարան, Վիեննա, 1942):

Արտաշէս Արեղեան, դասախօս Պերլիննի
Համալսարանին, հետաքրքրական տեղեկու-
թիւններ կը հաղորդէ Գորպատի (Գերմա-
նիա) Համալսարանին մէջ լսարձարգոյն ու-
սում առած Հայ երիտասարդներու մօտին,
որոնցմէ ոմանք անուանի դէմքեր են Հայ
գրականութեան, ինչպէս Խ. Սրովեան, Ստ.
Նազարեանց, Գէորգ Գողոխեանց, Թէեո-
վերջինս վաղամեռիկ՝ միակ ժողովրդական
երգով մը սիրելի անուն եղած է արեւել-
լահայ Հասարակութեան մօտ:

Արտաշէս Արեղեան չի մօտենար Գորշ պատեան ուսանողներու՝ գրական հայեացքով, նպատակն է պարզապէս աւանդել, (հիմնուելով համալսարանի դիւանական թղթածրարներու մէջ ամփոփուած փաստաթուղթերուն և Ալպոշմ Աքատեւիքոշմ-ի, ուր կան արձանագրութիւնները աշակերտաց) ճիշտ տեղեկութիւններ, անոնց ուսանողական կեանքի մասին, համալսարանի մուտքի թուականին, ունկնդրած նիւթերուն, աւարտական քննութիւններու և այլ մասնաւորամասնութիւններ՝ որոնք կրնան օգտակար ըլլալ ամբողջացնելու համար կենսագրական ծանօթութիւնները:

Փրօֆ. Ա. Արեղեան կը թուէ մեզի քառասուն աշակերտներու անուններ, որոնք 1835-1889 տարիներու շրջանին արձանագրուած են Համալսարանի Աղպոս Արատեւ միջոցով մէջ: Ու այդ քառասուն աշակերտներէն միայն 17 հատը կրցած են աւարտել, տալով իրենց վերջնական քննութիւնը ու ստանալով պսակաւորի վկայա-

գիրքը: Ատոնց մէջ իրրեւ անդրանիկ արձա-
նագրեալ տշակերտ՝ և իրրեւ ամէնէն յա-
ջողագոյնը՝ եղած է Ստեփանոս Նազարեանց,
որ 1840-ին ձեռք բերած է փիլիսոփ. մաս-
նաճիւղին վերաբերեալ պատմական-բանա-
սիրական ուսմանց վկայականը: Երկրորդը՝
Գարրիէի Խառնիսեանց՝ Բնագիտական ուս-
մանց, 3. Մարկիան Ռոտինեանց՝ Բժշկու-
թեան, 4. Գեորգ Գոյոյիսեանց՝ գիւնանագիտա-
կան ուսմանց, 5. Աղեքսանդր Ռօտինեանց՝
Ուսողական-Բնագիտական ուսմանց, 6. Վա-
հան Ասկարեանց՝ տնտեսական գիտութեանց,
7. Նիկողայոս Շարոյեանց՝ տնտեսական գի-
տութեանց, 8. Ֆիրզոյ Նազարեգեանց՝ Բժշ-
կական գիտութեանց, 9. Իշխան Միրալի
Անատունի՝ գիւնանագիտական ուսմանց. ա-
սոր աւարտաճառը պահուած է հետեւեալ
խորագրով. «Օրդին Նաշնոկին, Ռուսաս-
տանի ամենանշանաւոր գիւնանագէտը 17-րդ
դարում». Կը բաղկանայ 186 էջերէ: 10.
Աղեքսանդր Դորդանեանց՝ գիւղատնտեսա-
կան գիտութեանց, 11. Միրալի Ղազա-
րեանց՝ գիւղատնտեսական գիտութեանց,
12. Լեւոն Տիգրանեանց բժշկական գիտու-
թեանց: Սա գրած է նաեւ «Յիշողութիւն-
ներ» Գորպատի համալսարանի հայ ուսա-
նողութեան մասին: 13. Մովսէս Ազնաւո-
րեանց՝ բողոքական որ 1871-ին աստուածա-
բանական ուսմանց վկայագիրը առած է,
ինչպէս նաեւ, 14. Յովակիմ Զախախաւ-
զեանց, նոյնպէս բողոքական որ նոյն տարւոյն
մէջ առած է աստուածաբանութեան վկայա-
գիրը: 15. Խառնակ Մայստրեանց՝ որ Թիֆ-
լիսի մէջ ճանչցուած էր որպէս քաջ բժիշկ
Սամսոն Մայսուրեանց անունով, ստացած
է բժշկական գիտութեանց վկայագիրը
1882-ին: 16. Փարսադան Տէր-Մովսէսեանց՝

որ յետոյ եղած է Մեսրոպ արքեպիսկոպոս,
միաբան Էջմիածնի, առած է պատմա-բա-
նասիրական ուսմանց վկայագիրք: 17. Դեռն
()Աստվանանց՝ բժշկական գիտութեանց
վկայագիրք:

Բայց ինչ որ զարմանալի է այս ամբողջ քննական պրպտումի արդիւնքին մէջ՝ այն է որ այդ քառասուն արձանագրեալ աշակերտներու կարգին յիշատակուած է 10 ԱՍՏՈՒՐ ԱՖՈՎԷԱՆԻ անունը, որուն կենսագիրները ու նոյնիսկ ինքը խօսելով իր մասին՝ յայտնած է թէ իր բարձրագոյն ուսումն ատած է Դորպատի համալսարանը։ Արձանագրութեանց ցանկին մէջ կը պակսին նմանապէս անունները Ռափայէլ Պատկանեանի և Գէորգ Բարխուդարեանի, որոնք գիտենք թէ Դորպատի համալսարանը սորված են։

Ի՞նչպէս մեկնել այս պահաւոր: Մոռացութեան վերագրել տնկարելի է, երբ նկատի առնենք Դորպատի պէս համալսարանի մը քարտուղարական պաշտօնէութեան կանոնաւորութիւնը, որ բոլորովին աննշան անուններն անգամ պահած է իր արձանագրութեանց մէջ: Յետոյ՝ այս անտեսումի պարագան միայն խաչատուր Աբովեանինը չէ, այլ իրեն հետ նաեւ Ռափ. Պատկանեանի և Գէորգ Բարխուդարեանի:

Այս պակասին լուծումը կը գտնէ Փրոֆ. Ա. Արեգեան անոր մէջ՝ որ այս երեքն ալ ընդունուած են Համալսարան որպէս ազատ ունկնդիր, չունենալով կիմնագիտնի աւարտման և կամ հասունութեան վկայականը, առանց որու չէր կարելի, ինչպէս այսօր ալ արձանագրուիլ իբրեւ կանոնաւոր աշակերտ Համալսարանի:

Խաչատուր Աբովեան անցած է Գորպատ,
Համալսարանի ուսուցչապետ Պարրոտի մի-
ջամտութեամբ միայն՝ հետեւելու Համալսա-
րանի նւթերուն, բայց չունենալով միջնա-
կարգ ո՛ւր է վարժարանի վկայականը՝ բնա-
կանաբար չէր կրնար իսկական աշակերտ
արձանագրուիլ Համալսարանի: Իր պարա-
գային մէջ գտնուած են ուրիշ հայ աշա-

կերտներ ալ, զուրկ ո՛ւնէ միջնակարգ վարժարանի մը վկայականէն, և որպէս զի կարենան պաշտօնապէս արձանագրուիլ՝ համալսարանի պատրաստութեան համար Դորպատի մէջ բացուած Կրիմաղիտնի ընթացքն ընել պարտաւորուած են։ Այս Կրիմաղիտնի աշակերտներու ցանկին մէջ ալ էինք գտներ Խ. Աբովեանի անունը, մինչ կը գտնենք Ստ. Նազարեանցի անունը և ուրիշներու։

Խ. Աբովեան արձանագրուած չըլլալով Այստեմ Արատեմիրքում-ի մէջ՝ մենք հոն չենք կրնար բնականաբար գտնել ո՛ր և է իցէ տեղեկութիւն իր ուսանողական կեանքին նկատմամբ, որոնք եթէ աւանդուած ըլլային, այսօր կարգ մը անճշտութիւններ չէինք ունենար, օր. նոյնիսկ իր ծննդեան թուականին մասին:

Հիններէն տարտամութեամբ նշանակուած է 1804/1805, չկարենալով ընարել թէ որն է ծննդեան ճիշտ տարին: Բոլոր կենսագիրները, որոր գրականութեան գաղափարը պատրաստողները չեն կրցած վճռական թուական մը գնել: 1939-ին Պր. Արամ Երեմեան ուրիշ նորութիւն մ'ալ կը բերէր, որուն համաձայն ինքնիսկ Աբովեան ճշտած է իր ծննդեան թուականը՝ նշանակելով 38 տարեկան, 1847-ին իր իսկ ձեռքով գրուած Երեւանի գաւառական դպրոցի տեսչութեան շրջանին « Յուցակ Ծառայութեան » գեկուցումին մէջ: Արդ, եթէ 38-ն հասնէր 1847-էն՝ կը հասնինք 1809 թուականը որպէս ծննդեան տարի Խ. Աբովեանի. (տես « Հայաստանի Կոչնակ », 1939, թ. 32, էջ 7(767):

Դորպատեան համալսարանի արձանագրութեանց տետրը որքան որ կը լռէ իս. Արովեանի մասին, կու տայ սակայն տեղեկուութիւններ անոր որդւոյն Վարդան Արովեանի վրայ՝ թէ ծնած է 31 Մայիս 1840-ին ի Թիֆլիս և թէ հետեւած է տնտեսական գիտութեանց, թէ չէ կրցած աւարտական քննութիւնը տալ, բայց ձեռք բերած է 1864-ին ռուս լեզուի կրտսեր ուսուցչի վկայականը. եղած է սկիզբը ուսուցիչի ծաւ-

կրորդ տարբերութիւն մ'ալ Դորպատի մուտքին թուականն է, որ Միանասարեանցի համաձայն՝ է 1853, մինչ ղիւանական թուղթերու մէջ յայտնապէս նշանակուած կը գտնենք 1852-ի Յունուար ամիսը:

Գ. Գողթինեանց միակ բանաստեղծական երգով մը սիրելի անունդ արձած է: Այդ երգը անցած է հայ ժողովրդական երգերու հաւաքածոներուն մէջ:

Սյս առթիւ աւելցնենք նաեւ մէկ քանի ճշտումներ, զոր ինքը հեղինակը պատշաճ դատած է ընել «Քնար Հայկական» ի տպագրութեան աւարտին: Երգին խորագիրն է «Երգ պանդուխտ պատանեկի», գրուած 1854, Յունուար 2-ին Գորպատի մէջ: Եղանակը յարմարցուած է իրմէ բաշկիրեցւոց «մակլաշկա» (լատտափայտ) երգին վրայ, զոր լսած է Գորպատի մէջ ըաշկիր պատեւրազմիկներէն: Աշտարակ անունը (Ախ, Թըռիբ ծիծեռնակ- Ծընած տեղւս Աշտարակ) դրուած է իբրեւ յանգ, ուստի կը հարթուի բոլորովին ժամանակին յայտնուած այն կարծիքը՝ թէ երգին հեղինակը կը համարուէր Ներսէս Ե. աշտարակեցին, որ գրած ըլլայ իբրեւ կարօտի երգ մը իր հայրենի տան ու ծննդավայրին՝ Պետարապետ

գտնուած ատենը: Ատեն մը այդ երգին
հեղինակ կը կարծուէր նաեւ Վահան Ասկա-
րեանց, նոյնպէս ուսանող Գորպատի հա-
մալսարանը և հոն վաղամեռիկ վախճանած:
Ասկայն Գողոթեանցի այդ յայտարարու-
թենէն վերջ՝ այլեւս ամէն ինչ կը լուսա-
բանուէր արդէն 1868-էն ի վեր:

Փրոֆ. Ս. Արեղեան իր « Դորպատի հայ Ուսանողութիւնը » գրքոյկին մէջ չի աւանդեր մանրամասն իր հաւաքած բոլոր տեղեկութիւնները՝ վերապահելով զանոնք իր ընդարձակ մէկ գրութեան մը համար։ Ան հաշակ մը միայն տուած է արթնցնելու մեր հետաքրքրութիւնը։ Իր ծրագիրն է նախ հրատարակել ընդարձակ հատորի մը մէջ՝ քաղած բոլոր վաւերաթուղթերու լուսատիւները, յետոյ օգտագործել զանոնք կարգ մը մենագրութիւններու համար, որոնց խորագրերն են. Դորպատ և Հայաստան, Խաչատուր Աբովյան և Դորպատ ոչ իր գերական րարեկամները, Ստեփան Նազարեանց Դորպատոռն, Քերոյե Պատկանեան Դորպատոռն, Գեորգ Դոդոխեան Դորպատոռն, Դեպի Դորպատ (Ուղեգրութիւն)։ Կը մաղթենք իրեն ժամանակ և յաջողութիւն։

2. U. 2.

Ե Ր Կ Ի Ր Ի Մ Մ Ա Յ Ր

Այս անկատար կեանքի ճամբուն իւրաքանչիւր քայլափոխի
 Կը դիտեմ քեզ, անո՛ւչ Երկիր, որպէս զիւթիչ շարժանքկար .
 Կը նայիմ քեզ, ի՛նչպէս կեանքը ծոցէդ երգի պէս կը բղխի,
 Շուրջդ լայնցող գեղեցկութեան, ուր մէջ երբեմն միայն կար :

Կը դետեմբեր, գըլուխդ հակած, սիրտդ ցամքած ձեռքերուդ մէջ.
Երբ կը նայիմ լացողներուն որ փոթորկէն հանդիստ կ'ուզեն.
Անցեալ կեանքիդ անդիր գիրքէն կը թերթատեմ բիւրատուր էջ,
Մինչ կը շարժիս լալահառաչ չարիքներու մէջէն անդէն:

Դաշտերու մուտ լայնութենէն երբ սեւ տեսնեմ մուխի նրման,
Եւ այդ սեւը կըրակ դառնայ, տանի քրտինքն հնճուորներուն,
Ականջ կու տամ անէծքներուդ, անարձաղանդ ողբի՝ նրման,
Մինչ մոխիրէն մայր պաղատող որբի մը պէս կը սպառիս դուն:

Բայց կը շարժին ըստուերները, կը կայծկլտան աչքերըդ մերթ .
 Հողի՛դ է որ ջրվէժի մը անհուն րիթմով ահա կ'երդէ .
 Տառապանքիդ էջերուն վրայ կը տարածուի ոսկեղէն թերթ ,
 Կը գգամ որ շուտ պիտի շրջես կիսախաւար բեմը վէրքէ :

Եւ կը բացուիս վարդերու պէս, կ'ըլլաս կեանքիդ տէր վերջապէս, Բռնած շունչը ասպադային, ջահի մը պէս հրդօր ու վառ. Կը մօտենաս չորս հովերու ցրուածներուդ եւ կը կապես Երջանկութեանդ անոնց հողին, չրկայ արեւ քեզմէ պայծառ:

Արցունք չեղած անցնող չըկայ այս անկատար կեանքի դիժէն .
Այս կեանքին մէջ միշտ ծափ չըկայ, առանց ամպի երկինք չըկայ,
Միայն թէ դուն երկար լացիր, կըմախք դարձար տանջըւեղէն
Մինչեւ ամէնն երազ եղաւ, քեզմէ կալտառ չըկայ հիմա :

Արարատը՝ ճակտին առած հարսանեկան քողն ու պըսակ,
Շատ չողերու տեսաւ մարիլն, չատ աղգերու ահը տեսաւ.
Նոր քող հաղաւ, երբ կանգնեցար մըլուչն ի վեր յաղթահասակ,
Աչքերուդ մէջ՝ կողեր ծեծող հողառ յանթի մահը տեսաւ:

Գիրկըդէ առիր ձիւնէ հսկան, հաղորդեցիր կամքդ անոր .
Յնցո՛ւմ տիրեց պահ մը անոր, եւ կարօտով դիտեց հեռուն,
Ոլոր մոլոր ճամբաները, խրճիթները թափուր բոլոր,
Մոխիրները որ տէրն էին երբեմն անոնց բարիքներուն :

Եւ պատմեց թեղ իր աչքերուն քաղած կսկիծն, չըլացիր դուն
Քաջի մը պէս եւ ուխտեցիր որ գիցական Քաղերկ դառնայ.
Անոնք որ քա՛րուքանդ ըրին կէսը քուկին, անդերն ու տուն,
Ձր տեսնեն իր կատարր պերճ, ան անմատոյց երկինք դառնայ:

Եւ սըլանաս դէպի աշխարհն կարօտաւառ երազներուդ,
Ամէն չորցած ծաղկի վըրայ բոցըդ հիւսէ կեանքի կամար,
Յամբած գետերն հոսին նորէն, ծըլիայ հոգին մոխիրներուդ,
Թեւերդ հասնին մինչեւ ինծի, ծովեր հեռու Երկի՛ր իմ մայր:

ԳՐԻԳՈՐ ԱՐԱԾԱՆԻ

Հոս ԱՅՏԷԼՈՍ.